ՆԱՄԱԿ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա

Սրբազնագույն Վեհափառ.

Նախօրոք ներողություն եմ խնդրում, որ առիթ եմ ստեղծում նորից խորհելու Երևանում Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու կառուցման շուրջ:

2001 թվականին հայոց եկեղեցու հիմնադրման 1700-ամյակը լրանալու կապակցությամբ 1989 թվականին Դուք հղացաք Ս. Գրիգորի կառուցումը Զվարթնոցի օրինակով, Թորոս Թորամանյանի վերակազմության նախագծի հիման վրա:

Ձեր հանձնարարությամբ Մայր Աթոռի ճարտարապետական խորհուրդը որոշեց՝ հավանություն տալ նախագծին, մտցնելով արարողության պահանջները բավարարող որոշ փոփոխություններ, որը և իրականացվեց (այս մասին կա արձանագրություն, որ գտնվում է Դիվանում):

Ձեր այդ ցանկությունը, եկեղեցական խորհրդի նախկին նախագահի ջանքերով վերափոխվեց՝ «առավել հարմար նախագիծ ստեղծելու» ակնկալությամբ հայտարարվեց մրցույթ երկու տարի ժամկետով:

Այդ մրցույթին ներկայացվեցին 30-ից ավելի նախագծեր, որոնցից երեք լավագույնների ընտրությունը հանձնարարվեց հատուկ ժյուրիին, այնուհետև, կառուցման համար միակ հարմարը պիտի որոշեիք Դուք:

Քանակական առումով հաջողած մրցույթի վերջնական արդյունքում, մասնագետիս կարծիքով, թերևս չկա մի նախագիծ, որը, թեկուզև որոշակի վերամշակումով, հանձնարարելի լիներ կառուցման համար:

Ստացվում է, որ կորցնելով երկու անդառնալի տարիներ, մենք չունեցանք «Զվարթնոցը», մեր ժողովրդի այդ հանճարեղ գլուխգործոցը գերազանցող նախագիծ:

Այս իրավիճակով, ինչ-որ ձևով ուրվագծվում են անձամբ Ձեր մտահղացման ձախողվելու նշաններ, որի համար ափսոսելուց զատ, պետք է փնտրենք հավաստի միջոցներ դրությունը փրկելու համար:

Կարծում եմ, և դա շատ շատերի կարծիքն է, Դուք վերադառնաք Ձեր, շուրջ երկուսուկես տարի առաջ հղացած մտքին՝ Սուրբ Գրիգորը կառուցել Զվարթնոցի նախագծով: Դրա իրականացումը մնացած 8-9 տարում, թերևս հնարավոր է, արդյունքը՝ շատ առումներով, երաշխավորված:

Խոնարհաբար՝ Տիրան Մարության (ճարտարապետ)
Երևան 9, Մոսկովյան 8, բն. 33
հեռ. 56-08-33

[շարադրվել է, թերևս, 1992 թ. ամռանը-սեպտեմբերին]